Կ-967-25.11.2024-ՏՀ-011

Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 245-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 5-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

2) 1-ին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 6-րդ կետով՝

«6) հանցագործության հիմքով սեփականատիրոջ տիրապետումից դուրս գտնվող փոխադրամիջոցների սեփականատերերը՝ այդ փոխադրամիջոցի մասով: Սույն կետի իմաստով հանցագործության հիմքով սեփականատիրոջ տիրապետումից դուրս գտնվող փոխադրամիջոցների սեփականատերերը հանցագործության հիմքով փոխադրամիջոցը սեփականատիրոջ տիրապետումից դուրս գտնվելու մասին քրեական վարույթ նախաձեռնելու պահից մինչեւ փոխադրամիջոցը դրա սեփականատիրոջ տիրապետմանը հանձնելն ազատվում են հանցագործության հիմքով սեփականատիրոջ տիրապետումից դուրս գտնվող փոխադրամիջոցի գույքահարկից, եթե շարժական գույքի կադաստր վարող մարմնի կողմից Կառավարության որոշմամբ սահմանված կարգով փոխադրամիջոցի գույքահարկի հաշվառում իրականացնող համապատասխան տեղական ինքնակառավարման մարմնում տեղեկատվություն է ստացվում հանցագործության հիմքով սեփականատիրոջ տիրապետումից դուրս գտնվող փոխադրամիջոցի պետական գրանցումը կասեցված լինելու մասին:»:

Հոդված 2. Օրենսգրքի 246-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 5-րդ մասով՝

«5. Սույն օրենսգրքի 245-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիմքով փոխադրամիջոցների գույքահարկի հաշվարկումը դադարում է, իսկ հանցագործության հիմքով սեփականատիրոջ տիրապետումից դուրս գտնվող փոխադրամիջոցի պետական գրանցումը կասեցվում է ոչ ավելի, քան 1 տարի ժամկետով: Սույն մասում նշված ժամկետը ենթակա է երկարաձգման նույն ժամկետով, եթե շարժական գույքի կադաստր վարող մարմնում տեղեկատվություն է ստացվում քրեական վարույթի (այդ թվում՝ դատական վարույթի) հիմքով տրանսպորտային միջոցը սեփականատիրոջ տիրապետումից դուրս լինելու մասին:

Հոդված 3. Օրենսգրքի 250-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «փոփոխությունների» բառից հետո լրացնել «եւ պետական գրանցումը կասեցված փոխադրամիջոցների» բառերը:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը եւ տարածվում է օրենքն ուժի մեջ մտնելուց հետո կատարված հանցագործությունների հիմքով սեփականատիրոջ տիրապետումից դուրս գտնվող փոխադրամիջոցների գույքահարկի հաշվարկման գործընթացի վրա:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ

Կ-967-25.11.2024-ՏՀ-011/1 *Երկրորդ Առաջին ընթերցում*
Լրամշակված նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 245-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 5-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

2) 1-ին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 6-րդ կետով՝

«6) ~~Հ~~հանցագործության հիմքով սեփականատիրոջ տիրապետումից դուրս գտնվող փոխադրամիջոցների սեփականատերերը՝ այդ փոխադրամիջոցի մասով: Սույն կետի իմաստով հանցագործության հիմքով սեփականատիրոջ տիրապետումից դուրս գտնվող փոխադրամիջոցների սեփականատերերը հանցագործության հիմքով փոխադրամիջոցը սեփականատիրոջ տիրապետումից դուրս գտնվելու մասին քրեական վարույթ նախաձեռնելու պահից մինչեւ փոխադրամիջոցը դրա սեփականատիրոջ տիրապետմանը հանձնելն ազատվում են հանցագործության հիմքով սեփականատիրոջ տիրապետումից դուրս գտնվող փոխադրամիջոցի գույքահարկից, եթե շարժական գույքի կադաստր վարող մարմնի կողմից ~~Հայաստանի Հանրապետության կ~~Կառավարության որոշմամբ սահմանված կարգով փոխադրամիջոցի գույքահարկի հաշվառում իրականացնող համապատասխան տեղական ինքնակառավարման մարմնում տեղեկատվություն է ստացվում հանցագործության հիմքով սեփականատիրոջ տիրապետումից դուրս գտնվող փոխադրամիջոցի պետական գրանցումը կասեցված լինելու մասին:»:

Հոդված 2. Օրենսգրքի 246-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 5-րդ մասով՝

«5. Սույն օրենսգրքի 245-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիմքով փոխադրամիջոցների գույքահարկի հաշվարկումը դադարում է, իսկ հանցագործության հիմքով սեփականատիրոջ տիրապետումից դուրս գտնվող փոխադրամիջոցի պետական գրանցումը կասեցվում է ոչ ավելի, քան 1 տարի ժամկետով: Սույն մասում նշված ժամկետը ենթակա է երկարաձգման նույն ժամկետով, եթե շարժական գույքի կադաստր վարող մարմնում տեղեկատվություն է ստացվում քրեական վարույթի (այդ թվում՝ դատական վարույթի) հիմքով տրանսպորտային միջոցը սեփականատիրոջ տիրապետումից դուրս լինելու մասին:

Հոդված 3. Օրենսգրքի 250-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «փոփոխությունների» բառից հետո լրացնել «եւ պետական գրանցումը կասեցված փոխադրամիջոցների» բառերը:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը եւ տարածվում է օրենքն ուժի մեջ մտնելուց հետո կատարված հանցագործությունների հիմքով սեփականատիրոջ տիրապետումից դուրս գտնվող փոխադրամիջոցների գույքահարկի հաշվարկման գործընթացի վրա:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (*Կ-967-25.11.2024-ՏՀ-011/1*) ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (*Կ-967'-25.11.2024-ՏՀ-011/1*) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետ	Հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը՝ առաջարկում ենք նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետով նախատեսվող Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 245-րդ հոդվածի 1-ին մասում նոր լրացվող 6-րդ կետում նշված «Հայաստանի Հանրապետության կառավարության» բառերը փոխարինել «Կառավարության» բառով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետության քրեական	Հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասը՝ առաջարկում ենք օրենքի նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետով	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան	Ընդունվել է:

		դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված 2-րդ կետ	նախատեսվող Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասում նոր լրացվող 5-րդ կետում «Հարկային» բառը փոխարինել «Հայաստանի Հանրապետության հարկային» բառերով:	փոփոխություն:	